

ԹՈՒԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՀՆԱԳՈՅՆ,  
Թ. ԴԱՐԻ ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ՔԱՐ  
ՄԵՂՈՒ ՏԱՐԱԾԵՐՁԱՆԻՑ

ԱՇՈՏ Գ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ  
ashot.manucharyan.1959@mail.ru

Սիւնիքի արձանագրութիւնների լրացուցիչ ժողովածովի կազմման շրջանակներում (աշխատասիրութեամբ Գ. Գրիգորեանի) 2013ի ամռանը շրջագայելով Մեղրու տարածաշրջանում՝ գրանցեցինք մի խաչաքանդակ քար, որը թուագրութեամբ աւելի հին է, քան Թ. դ. թուագիր, ցարդ յայտնի հետեւեալ վեց խաչքարերը.-

853ի Արցախի Մեծարանց Սողոմոն Եպիսկոպոսի<sup>1</sup>,


866ի Վաղուհաս գիւղի մօտի՝ Սարգսի<sup>2</sup>,

879ի Գառնիկի՝ Կատրանիդի թագուհու<sup>3</sup>,

881ի Մեծ Մարիկի՝ Սիւնեաց և Աղուանից իշխան Գրիգոր Աստրեսեհեանի<sup>4</sup>,

882ի Դաշտաղեմի՝ Սուսէի<sup>5</sup>

886ի Կեչուտի՝ Դաւթի<sup>6</sup>:



Նորայայտ խաչքանդակ քարը<sup>7</sup> գտնուում է Ափկէս<sup>8</sup> գիւղատեղիում, ԺԷ. դ. եկեղեցուց մօտ 500 մ. հիսիսի: Քարը գրանիտ է: Նրա արեւմտեան մակերեսին կերտուած է հինգ խաչապատկեր՝ երկուսը մեծ, կողք կողքի

եւ երեքը՝ փոքր: Դրանցից երեքը՝ մեկ մեծը եւ երկու փոքրերը, հողմահարուած են:

Այն յաւակնում է դասուելու խաչքարերի նախօրինակների շարքին, քանի որ բնութագրելով Հայաստանի վաղ խաչքարային կոթողային յուշարձանները՝ Ստեփան Մնացականեանը գրում է. «Խաչքարի ընդհանուր կոմպոզիցիոն մշակումը հենագոյն խաչքարերում պարզ առանց որեւէ պաճուճանքի խաչեր են, քանդակուած հարթ, կիսաշրջանաձև աւարտուող սալերի վրայ», նաև՝ «Յայտնի է, որ հենագոյն խաչքարերն աչքի են ընկեռում իրենց պարզ ու յստակ ձեւերով, ընդ որում հիմնականը, որոշիչը այստեղ բուն խաչի կոմպոզիցիան է, իսկ օժանդակ մոտիւները եւ զարդարեւերն ունեն անհամեմատ աւելի աննշան ու երկրորդական նշանակութիւն»<sup>9</sup>:

Սեր կողմից յաւելներ, որ գրանիտը կարծր, դժուար մշակուող քար է, ուստի պատուիրատուն եւ վարպետոր բաւարարուել են՝ խաչեր ու հակիրճ յիշատակութիւն բողենելով:

Ափկեսի նորայայտ յուշաքարի խաչապատկերների շուրջ Ոաձեւ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը<sup>10</sup>.

Հ. Թ. ՈՒԻՒՆ. ՄշԶ (827)... / ՄԲ ԽԱՉՍ / ՀՇ ՐԱԶԱՏԱ 11:

Համիլտոն Պետրոսեանը նկատել է, որ առաջին խաչքարեր կանգնեցնողների շարքում են պետութեան եւ եկեղեցու մի շարք աչքի ընկնող դէմքեր՝ թագուհի, Արեւելից Կողմանց իշխանը, Եպիսկոպոսներ, քահանաներ եւ այլը<sup>12</sup>: Նշանակում է՝ արձանագրութեան մեջ յիշատակուող Հրահատը պէտք է որ իշխան եղած լինի:

Յիշեալ ժամանակաշրջանում պատմական աղբիւրներից Հրահատ անունով յայտնի է չորս իշխան.-

1. Տաթեւի 839ի վաւերագրում, որով Սիւնեաց տէր Դաւիթ Եպիսկոպոսը (836-853) 10.000 դրամով նահանգի գահերէց իշխան Փիլիպէ Ա.ից (821-844) գնում է Արծին եւ Բերդկաներից զիւլերը. որպէս գործարքի վկայ յիշատակուում է նաև տէր «Հրահատ՝ տէառն Սահակաց որդի»<sup>13</sup>:

Հայկարամ Ութմազեանն այս Հրահատին համարում է որդին Գեղարքունիքի տէր, զահակալ իշխան Սահակի, ով զոհուել էր Կաւակերսի ճակատամարտում 831/832ին<sup>14</sup>:

Հետեւապէս այս Հրահատը չէր կարող լինել Ափկեսի խաչքարում յիշատակուող անձը, քանի որ նրա տիրոյթները գտնուել են Գեղարքունիքուն:

2. Սիսական տոհմի Գեղարքունեաց ճիւղում հանդիպում ենք Հրահատ անունով մեկ ուրիշ իշխանի, ով եղբայրն էր նշանաւոր Վասակ Գաբրուի (851-859) եւ որդին Գրիգոր Ա. Սուփանի (832-851): Նա հանդէս է

գալիս Թ. դարի վերջին քառորդում՝ 874ի Շողուազավանքի վանքագրում իր հօրեղոր՝ Գեղարքունեաց Գաւառի զահակալ իշխան Գաղիկի հետ<sup>15</sup>:

3. 844ի ընծայագրում, որով Մինեաց զահերեց իշխան Փիլիպէն Տաթեւի վանքին է նուիրաբերում իր սեփական համանուն գիւղը՝ վկաների շարքում ներկայ են «Տէր Հրահատ եւ Գաղիկ՝ որդիք Գրիգորյ՝ Մինեաց տէառն»<sup>16</sup>:

Մինեաց տէր Գրիգորը, ըստ Ութմազեանի, չէր կարող Գեղարքունիքի տէր Սուփան Ան լինել, քանի որ նա Գաղիկ անունով որդի չի ունեցել<sup>17</sup>: Նրա որդիները Վասակ Գարուտն ու Հրահատն էին: Տեսւեապէս, ըստ պատմաբանի, նա 881ին յիշատակուող իշխանաց իշխան Հրահատն է<sup>18</sup>:

Այդ թուականին, Մինեաց տէր, իշխանաց իշխան Հրահատը՝ Գրիգորի որդին, ըստ Սողոմոն Եպիսկոպոսի (863-880) Վանքագրի, Տաթեւի վանքին է յանձնել իր հայրենի Դարատափ գիւղը<sup>19</sup>: Կարծում ենք, որ նա չէր կարող Ավիկէսի խաչքարի Հրահատը լինել, քանի որ ժամանակային վիճ կայ 827 և 881 թուականների միջեւ՝ 54 տարի, եւ որ իշխանը 827ին շատ երիտասարդ պէտք է լիներ, ուստի դժուար թէ կարողանար կոթող կանգնեցուելու պատուին արժանանալ:

4. Տաթեւի նոյն 844ի ընծայագրում վկաների մէջ են «տէր Հրահատ եւ տէր Արուման՝ Սահակայ որդիիք»<sup>20</sup>: Սուեփանոս Օրբէկեանը նշում է, որ նոյն 844ին տէսնելով Մինեաց զահերեց Փիլիպէի նուիրատուութիւնը՝ մէծ իշխան Հրահատը՝ Սահակի որդին եւ Գրիգոր Արումանի եղբայրը, Հայկազոնն, նոյն Միսական տոհմից, որ «ունէր իր բաժին ժառանգութեան զԿովսական զաւառ եւ զՔաշուեիք», զնում է տէր Դաւիթ Եպիսկոպոսի մօս եւ Տաթեւի վանքին ընծայում Կովսական Գաւառի Նորաշինիկ անունով գիւղը՝ «իր բոլոր սահմանօք, լերամբ եւ դաշտաւ, ջերմաւ եւ ցրուով ծառով եւ տնկով...»<sup>21</sup>:

Այս նոյն Հրահատը յիշատակուում է նաև իր տիկնոց՝ Քուպղիդուխտի 867ի նուիրագրում<sup>22</sup>: Քուպղիդուխտը դուստրն էր Մինեաց մէծ նահապէտն, իշխանաց իշխնեցող Վասակի (մհ. 821) եւ բոյրը զահերեց իշխան Փիլիպէի (821-844): Իշխանուիկն արդէն ծեր էր, ինչպէս ինքն է ասում՝ «. մերձեցա ի ժամանակս ծերութեան»<sup>23</sup>, երբ Տաթեւի վանքին է նուիրաբերում իր Մաճ զիւղը՝ լեռներով, դաշտերով, մարգով եւ այգով, ջրով ու ցամաքով, ծառերով ու տունկերով:

Այս, որ Քուպղիդուխտի ամուսին Հրահատ իշխանը Սահակի որդի ու Գրիգոր Արումանի եղբայր Հրահատն է, ինչպէս նշում է Ութմազեանը, ակնբախ է հետեւեալ երեք վաստերից:

ա) Մաճը զտնուում էր Քաշունիքում, որի տէրը Հրահատն էր:

բ) Երկուսն էլ զանգատուում են անզաւակուութիւնից: Քուպղիդուխտ իշխանուիկն իր 867ի ընծայագրում տրտնջում է, որ «զրկեալ էի ի զաւառէ

մասաեց<sup>24</sup>, իսկ Հրահատ իշխանը 844ի նուիրագրում նշում է. «զմտաւ ածեալ զանգաւակութիւնս իմ.»<sup>25</sup>:

զ) Երկուսն էլ խօսում են Հրահատի գործած ինչ-որ մեղքերի ու յանցանքների մասին: Իշխանութին, որպէսզի հաստատուն պահի Տաթեսի վանքին իր կատարած նուիրատուուրինը, Վճիռը խախոտողներին սպառնում է Աստուծուց և Ս. Խաչից դատապարտմամբ, ինչպէս նաև նզովքով հոգեւոր տէրերի, ծնողների, և «տէառն Հրահատայ, որ իմ կենաց կցորդի էր զամենայի մեղս և զանցանս Աստուծած ի նմանէ տուժեցէ»<sup>26</sup>: Հրահատը 844ի Նորաշինիկի կտակագրում խոստովանում է. «Ես Հրահատ բազմամեղ՝ երանելի տէառն Սահակայ որդի, վասն իմ չար և անիրաւ զեացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազում և ազգ ազգի յանցանօր և լցեալ իբրեւ զծով անքի չարեօր ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւոր դատաստանին..»<sup>27</sup>:

Ըստ Ութմազեանի, այս Հրահատը 867ին արդէն վախճանուել էր<sup>28</sup>:

Մենք այս բազմամեղ իշխանին համարում ենք Ափկէսի նորայայտ խաչքարի արձանագրութիւնում յիշատակուող Հրահատը: Նախ ժամանակները լիովին համբնեսում են, երկրորդ նրա տիրոյթներից Կովսականը հարաւ-արեւմուտքից սահմանակից էր Արեւիք Գաւառին<sup>29</sup>, որի արեւելեան մասում է գտնուել Ափկէսի զիւղը: Զի բացառում, որ թ. դ. սկզբներին Արեւիք Գաւառի արեւելեան՝ Ափկէս-Թոս-Վերին Մալեւ-Քուշերը հասուածը ներառուած լիներ Կովսականի և Քաշունիքի տէր, Հրահատ որդի Սահակի տիրոյթներում, միաժամանակ ենթադրելով, որ, հնարաւոր է՝ իշխանը դրանց տիրացած լիներ բռնութեամբ, այսինքն՝ յանցաւոր ճանապարհով, մեղք գործելով, ինչը բնութագրական էր նրան:

Ուշագրաւ է Պետրոսեանի այն դիտարկումը, թէ «Խաչքարերը երեւան եկան արարական լծի թուլացմանը զուգահեռ, աննկատից դէպի նկատելին, համեստից դէպի ճոխը սկզբունքով, դատեալով մի տէսակ քաղաքական-դաւանական տէղաշարժերի արձագանքը: Հազի թէ պատահականութեան արդիներ է այն իրողութիւնը, որ առաջին թուազիր խաչքարերը համապատասխանում են Արարական Խալիքայութիւնց Հայաստանի քաղաքական անկախութիւն ձեռք բերելու ժամանակին.. Ինչ որ իմաստով խաչքարը հանդէս եկաւ որպէս վերականգնուող հայկական պետութեան ինքնութեան խորհրդանշան և նրա զարգացումն էլ սկզբնական շրջանում պիտի որ աւելի «զգայունորէն» արձագանքէր տարածաշրջանում եւ երկրում տէղի ունեցող քաղաքական-դաւանական փոփոխութիւններին»<sup>30</sup>:

Ապա, անդրադառնալով Քոլատակի Մեծարանց և Վաղուհասի բուազիր երկու հնագոյն խաչքարերին (853 և 866) Պետրոսեանը եղբակացնում է, որ «Արցախը ոչ միայն ներառուած էր խաչքարակերտման գործընթացի մէջ, այլեւ հնարաւոր է, որ որոշ քայլեր

այստեղ, կապուած քաղաքական իրավիճակի հետ, աւելի վաղ կարող էին տեղի ունենալը<sup>31</sup>:

Հնագիտի այս որակումն աւելի յատկանշական է Սիւնիքի համար, քանի որ, այս ժամանակ, երբ Արցախում երկրամասի բնիկ տէրեր Առանշահիկ իշխաններն ի դեմս հօրագոյն Սահի Իրն Սումբատի (Թ. դ. Ա. կես) զքաղուած էին իրենց աւատական խորած իրաւունքների վերականգնմամբ, նոյն միջոցին Սիսական աշխարհում գործում էր կառավարման կայացած համակարգ՝ զահերեցութեան և զահակալութեան կուտ կառուցուածքով:

Բայց եւ այնպէս, այդ ծայրամասային երկու հօրացած նահանգների, նաև Վասպուրականի, եւ ինչպէս հայրենասէր պատմիչն է յաւելում, հայոց միս իշխանների՝ ուժեղ կենտրոն Շիրակ-Այրարատի շուրջ համախմբուելու շնորհի էր, որ վերականգնուեց Հայաստանի պետականութիւնը<sup>32</sup>:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՄԵՐ

<sup>1</sup> Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. V, Արցախ, կազմեց Սեղրաք Բարիտուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 12: Խաչքարը չկայ, նրա մասին արձանագրութիւնը փորագրուած է պատուանդանին:

<sup>2</sup> Նոյն, էջ 113:

<sup>3</sup> Babken Arakelian, *Garni, Tom I. Rezultatei Raskopok 1949-1950 gg.* (Գառնի, Տոր. 1, 1949-1950 թթ. պեղսմեների արդիւրեները), Երեւան, 1952, էջ 84: Կատրանիդէն կինն է Աշոտ Ա. Քաքաստուի արքայի (885-890), ոլ Սեւանի 874ի վիմագրում երկից լիշտատկուում է որպէս թագաւոր (Կարօ Ղաֆարարեան, Հայկական Գրի Սլքընական Տեսակները, Երեւան, Արմֆան, 1939, էջ 68):

<sup>4</sup> Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. IV, Գեղարքունիքի Կամոյի, Մարտունու և Վարդենիսի Ծրջաններ, կազմեց Սեղրաք Բարիտուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 334:

<sup>5</sup> Հայաստանի Միջնադարեան Կոթողային Յուշարձանները. IX-XIII դդ. Խաչքարերը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 14:

<sup>6</sup> Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. III, Կայոց Զօր, Եղեգնաձորի, Ազգիքեկովի Ծրջաններ, կազմեց Սեղրաք Բարիտուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 21: Ըստ Ա. Շահինեանի, Թ. դարից են նաև այս երկու որմնախաչերը. որոնցից մեկը գտնելուած է Տաթեւի վանքի Ս. Պողոս-Պետրոս կաթողիկէի արեւմտան մուտքից վեհի, այս տաճարը կառուցող Յովհաննես Եպիփառուուի լիշտակութեամբ, որը թէե թուական չննի, բայց թուագրուում է սրբարանի շինութեան ժամանակով՝ 895-906, իսկ միաս ներկային Գեղարքունիքի Մարզի Հացարատ Գիտի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան պատմին ազնուուած անարձանագիր խաչքարն է, որի թուագրութիւնը որոշում է աղօքարանի կառուցմամբ՝ 898-899 թթ. (Հայաստանի Միջնադարեան Կոթողային, էջ 15):

<sup>7</sup> Էափի խաչքար դժուարացաների, վարավոտանք, վաղուց աշքաթող արուած ձանապարհով մեզ առաջնորդել են Պատմական Միջավայրի Պահպանութեան

- Սիւնիքի Մարգարի Ծառայութեան պետի տեղակալ, պատմաբան և Հայրապետեանը և ազատամարտիկ Գ. Պողոսեանը, որոնց յայտնում ենք մեր խորին երախտազիստիթիւնը:
- <sup>8</sup> Տաթեսի վանքին հարկաւոր գիւղերի ցուցակում յիշատակում է Աբգավան՝ 8 միաւոր հարկաշափով (Ստեփանոս Օքքեան, Պատմութիւն Նահանջին Միսական, Թիֆլիս, Տպ. Աղանեան, 1910, էջ 521):
- <sup>9</sup> Ստեփան Մնացականեան, Հայկական Ճարտարապետութեան Միւնիքի Դպրոցը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1960, էջ 177:
- <sup>10</sup> Նոյն, էջ 174:
- <sup>11</sup> Քարի վայի անունը փորձել ենք կարդալ ԱԲՐԱՀԱՍՍԱ, բայց այդ դեպքում չեն նշմարում ԱԲ տատերի կամ կցագրերի հետքեր, այլ դրանց փոխարէն երեսում է Հի տառահետք: Այն նման է ՀՇԱՀԱՍ անուան երկրորդ Հին: Ինչ վերաբերում է բարի նախավիքջին տաղին, որը նման է Մի, ապա այն Տ ենք կարծում, զունելով, որ վերտից իշխող երա փոքր մասնիկը ջնջուած է, ինչպէս ՀՇԱՀԱՍ անուան վերջին Ա տաղի աջ սինազծի վերնամասը:
- <sup>12</sup> Համիլտոն Պետրոսեան, Խաչքար: Ծագումը, Գործառոյթը, Պատկերագրութիւնը, Խամատարանութիւնը, Երեւան, Փրինթինֆո, 2008, էջ 95:
- <sup>13</sup> Օքքեան, էջ 205:
- <sup>14</sup> Հայկարամ Ութմագեան, Միւնիքը IX-X Դարերում, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1958, էջ 309:
- <sup>15</sup> Նոյն, էջ 312. նաև՝ Օքքեան, էջ 175:
- <sup>16</sup> Օքքեան, էջ 215:
- <sup>17</sup> Ութմագեան, էջ 318:
- <sup>18</sup> Նոյն:
- <sup>19</sup> Օքքեանի հարկացուցակում Դարատափի չի յիշատակում (Օքքեան, էջ 509-523): Ութմագեանը գրում է, թէ Դարատափի տեղադրութիւնը յայտնի չէ, որով հնարաւոր կը լինէր որոշել իշխանաց իշխան Հրահատի՝ որդի Գրիգորի Միւնեաց տեառնի բուն տիրոյթները (Ութմագեան, էջ 319), չնայած մի այլ տեղ հաւանական է համարում դրանց գտնուելը Միւնիքի հարաւոր (Նոյն, էջ 26): Խիստ գայթակից կը լինէր Դարատափի Խոյնացումը Մեղրու տարածաշրջանի նախկին աղբեցանարքանակ Ալբարայի հետ (Ներկայիս Ալվանք): Տեղանունների բառարանում Դարատափը տեղադրում է կամ Բաղր կամ Կովսական գաւառներում (Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախչեան, Յ. Բարտեղեան, Հայաստանի Եւ Յարակից Երշանների Տեղանունների Բառարան, Հար. 2, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 55-56): Ըստ Ալիշանի, Դարատափը եղել է Խոս գիտի մօս (Հայր Ղետիկ Ալիշան, Միսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 227): Բայց Խոս գիտը Ութմագեանը տեղադրում է Հաբանդ Գաւառում (Ութմագեան, էջ 295):
- <sup>20</sup> Օքքեան, էջ 207:
- <sup>21</sup> Նոյն, էջ 208-211: Նորաշինիկը, ըստ Ա. Աբրահամեանի, Ղափանի շրջանի մէջ մտնող Նորաշէնիկի գիտը է (Ստեփանոս Օքքեան, Միւնիքի Պատմութիւն, Քարզանութիւնը, Ներածութիւնը և ծանօթազրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1986, էջ 466): Քաշունիքը Միւնիքի զաւառներից երբ որպէս վարչական միաւոր կազմաւորուել է Հ. Դ. Վերքերին՝ Բաղրի մաս-

---

Նաևմամբ: Սահմանակից էր Մինիքի Ծղուկ, Հարանդ, Բաղր, Կովսական և Արցախի Միև Հարանդ գաւառներին (Յակոբեան, Մելիք-Բախչեան, Բարսեղեան, Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան Հոդ. 5, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 300):

<sup>22</sup> Օրբելեան, էջ 220:

<sup>23</sup> Նոյն, էջ 219: Մաճ զիսդը գտնուել է Միև Բաղր կամ Քաշունիք Գաւառում՝ 7 միաւոր հարկաշափով (Օրբելեան, էջ 519): Այն եղել է Կապակի Առաջաձոր զիսդի մօս, ինչպես պարզել է Գ. Գրիգորեանը (տե՛ս՝ կրտ «Պատմական Մինիքի Մի Շարք Գիտերի Տեղադրութեան Շուրջը», Պատմարանասիրական Հանդես, 1966, № 4, էջ 236ի նաև՝ Օրբելեան, Մինիքի Պատմութիւն, Ա. Արքահամեանի ծանօթութիւնը, էջ 468):

<sup>24</sup> Օրբելեան, էջ 219:

<sup>25</sup> Նոյն, էջ 209:

<sup>26</sup> Նոյն, էջ 220:

<sup>27</sup> Նոյն, էջ 209:

<sup>28</sup> Ութմազեան, էջ 321:

<sup>29</sup> Տե՛ս՝ Հայկական Սովետական Հանրապիտարան, Հոդ. 5, Երեւան, ՀՍՍՀ 3. Մեղապարսի Տպ., 1979, էջ 637, նաև՝ Յակոբեան, Մելիք-Բախչեան, Բարսեղեան, Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան. Հոդ. 3, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1991, էջ 223:

<sup>30</sup> Պետրոսեան, էջ 95:

<sup>31</sup> Նոյն, էջ 97:

<sup>32</sup> Օրբելեան, էջ 175:

THE OLDEST 9<sup>TH</sup>-CENTURY-INSCRIBED  
KHATCHKAR (CROSS-STONE) FROM THE MEGHRI REGION  
(SUMMARY)

ASHOT G. MANUCHARYAN  
ashot.manucharyan.1959@mail.ru

There are only six *khatchkars* (cross-stones) with date inscriptions that go back to the mid-9<sup>th</sup> century. These *khatchkars* are found both in Armenia and Artsakh and are dated between 853 and 886.

The author reports on a newly found *khatchkar* that bears the inscription 'HRAHAT' and dates back to 827. The *khatchkar* was discovered in the summer of 2013 in the village of Apkes, Meghri region of Syunik.

The author describes the *khatchkar*, decodes the inscription and identifies the inscribed name, Hrahat, as the prince Hrahah Sahakyan. He was the ruler of the provinces of Kovsakan and Kashoonik, which bordered Arevik province in the south-west, now the Meghri region of the Republic of Armenia.

